դատախազէ, միայնակ գանգատողն հատուցանէ, վասն զի դատախազն ամենայն ժամ խոստացաւ հատուցանել զոր ինչ պարտն իւր և գանգատողն ոչ կամեցաւ, և 'ի վերայ անիրաւութեան իւրոյ եմոյծ զինքն 'ի դատաստան վասն 'ի վեր ամենայն ասացելոյս, ունեմ վկայ զի արդարացուցանէ բանն իմ, և յաւել քան զայս կամ և սպասիմ հրամանին պատուելի յապարանիս և այլն։

Գրուեցաւ 'ի դրունս Մայրաքաղաքին յերեւանու, յայսմ աւուր 10 նոյեմբերի ամսոյ և յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1768. ձեռամբ Սարգիս ատենաբանիս եմուտ 'ի յատեանն պատուելի յապարանի յերևանու։

Օրինակ թղթոյ վճռոյ որ եղանի դատաստանի:

## ԳԼՈՒԽ ՁԵ.

'Ի պատուելի յապարանէ դատաստանի մայրաքաղաքին յերևանու եղև վճիռ 'ի վերայ գանգատող Սարգսի բամբակաձորոյ հողագործի, և դատախազի Միքայէլ ձկնորսի վահանու, զի դատախազն հատուցանել պարտէ գանգատողին երկու հարիւր երեսուն և չորս հայոց դահեկան երծաթ 'ի անցելոյ ժամանակ յամսեանն սեպ-